Արձանագրություն 12

2020թ մայիսի 22-ին կայացավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նիստը՝ նախագահությամբ խորհրդի նախագահ Ա. Աբրահամյանի, քարտուղարությամբ՝ Լ. Աբրահամյանի: նիստին մասնակցում էր խորհրդի 6 անդամ, բացակա 2-ը:

ՕՐԱԿԱՐԳ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին / զեկուցող՝ խորհրդի նախագահ Ա. Աբրահամյան/:

Լսեցին խորհրդի նախագահ Ա. Աբրահամյանի հաղորդումը դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին:

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ.-ի մարտի 4-ի N 319-ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/կարգ»-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար պետք է հայտարարի մրցույթ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ-ի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգ»-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ. 4-րդ, 5-րդ, 6-րդ, 6.1, 7-րդ, 8-րդ կետերի պահանջներով խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար 2020թ-ի հունիսի 4-ից հայտարարել մրցույթ:
2. Հաստատել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տրամադրել ՀՀ ԿԳՄՄՆ-ին ոչ ուշ քան 01.06.2020թ, հրապարակել azdarar.am կայքում, ինչպես նաև երկու անգամ՝ հնգօրյա պարբերականությամբ՝ 04.06.2020թ. և 09.06.2020թ «Գեղամա» հեռուստաընկերությամբ:
4. Մրցույթին մասնակցելու համար հայտերն ընդունել հայտարարության երկրորդ հրապարկման օրվանից՝ 2020թ-ի հունիսի 10-ից մինչև 2020թ-ի հուլիսի 9-ը ներառյալ:
5. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների փաստաթղթերի ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամ Լ. Աբրահամյանին:
6. Մրցույթն անցկացնել Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի շենքում՝ այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2020թ-ի հուլիսի 20-ին՝ ժամը 12:00:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Գեղարքունիքի մարզպետին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը ներկայցնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գեղարքունիքի մարզպետի կողմից խորհրդին գրավոր առարկություններ և առաջարկություններ չներկայացնելու դեպքում:

Խորհրդի նախագահ՝ Ա. Աբրահամյան

Խորհրդի քարտուղար՝ Լ. Աբրահամյան

Հավելված
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման
խորհրդի 2020թ. մայիսի 22-ի նիստի որոշման 2-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի հաստատության տնօրենի թափուր տեղի պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարել մրցույթ:

Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիություն
2. Բարձրագույն կրթություն
3. Ուսումնական հաստատության կառավարման իրավունք /հավաստագիր/

Մրցույթում մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են.

1. Դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճեն
3. Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճեն
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիր /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն 3 օր առաջ/
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ /առկայության դեպքում/
6. Աշխատանքային գրքույկի պատճեն
7. Զինվորական գրքույկի պատճեն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. հուլիսի 20-ին ժամը 12:00-ին **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց»** ՊՈԱԿԻ-ի **շենքում:**

Հասցե՝ գյուղ Գեղարքունիք Գարեգին Նժդեհի 1

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 077049048, 094518223
հեռախոսահամարներով